Կովկասի ակտիվ պաշտպաններից է ՍՄԿԿ անդամ, աշտարակցի Հասմիկ Թամազյանը: Նա Կովկասի հերոսական պաշտպանության օրերին կամավոր մեկնում է կարմիր բանակ, սովորում և դառնում զենիթային հրետանավոր:

Համառ և կատաղի մարտեր էին մղվում Արմավիր քաղաքը ազատագրելու համար: Հիտլերականները ուժեղ կրակի տակ էին պահում մեր պաշտպանության դիրքերը: Գործում էր թշնամու ավիացիան: Մեր ռազմա-օդային դիվիզիոնի հրամանատարի առաջադրանքով Թամազյանի ջոկը արագորեն հայտնաբերում է հակառակորդի ինքնաթիռների թռիչքի ուղղությունը և բարձրությունը: Երբ ինքնաթիռները մոտենում են մեր պաշտպանության գծին, զենիթայինների հուժկու կրակը ցրում է նրանց խումբը, ոչնչացնում մի քանիսին: Խափանվում է թշնամու ավիացիայի այդ օրվա հարձակումը Արմավիր և Կրոպոտկին քաղաքների վրա:

Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում անձնուրաց սխրագործությունների համար Թամազյանը հրամանատարության կողմից երկու անգամ արժանանում է պատվոգրի և պարգևատրվում Մարտական ծառայությունների համար մեդալով:

Փորձված ռազմիկ Թամազյանը մասնակցել է Ուկրաինայի, Մոլդովիայի ազատագրմանը, մարտերով հասել Չեխոսլովակիա: Նա միաժամանակ դիվիզիոնի կուսակցական կազմակերպության քարտուղարն էր:

Հեռաչափային ստորաբաժանման հրամանատար կապիտան Պանկովը և քաղգծով նրա տեղակալ մայոր Ժիլկինը Թամազյանի հորը գրել են. «Մեր ստորաբաժանման մեջ ծառայությունն անցկացնելիս Ձեր դուստրը իրեն դրսևորեց որպես լավագույն աղջիկ-մարտիկներից մեկը: Ամբողջ ծառայության ընթացքում նա եղել է մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկ, համեստ ու կարգապահ մարտիկ»[1]:

---

1 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 55ա, թ. 2: